



ՄԱՍԻՍ

ՀԱՆԴԵՍ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ
ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՍԵՆ ՇԱՐՍԹ ՕՐ

ՏՆՕՐԷՆ - ԽՄԲԱԳՐԱԳԵՏ
ԳՐԻԴՈՐ ԶՕՀՐԱՊ



روز فیروز ولادت باهر المینت حضرت پادشاهی

ایلدک تبشیر یمین و مینت

قلوب جهانہ کلدی مسعدت

قیدک ای نجل نجیب سلطنت

بشقہ آیین جلیل معدت

دولتک سایہ کده بولدی رفعتی

مملکت عہد کده کوردی راحتی

یوم مسعودک ایا شاء جهان

مسعدت بخش قلوب عثمانیان

کورمه مش چشم فلک امثالکی

ایتسون مولا فزون اقبالکی

طوغدیفک کون طوغدی خورشید جلال

طلعت رویکدن آلدی فرہلال

قالمدی شاد اولیان فرد فرید

بیگ یشاسن حضرت (عبد الحمید)

ՏԱՐԵԴԱՐՁ ԾՆՆԴԵԱՆ

ՕԳՈՍՏԱՓԱՌ ՍՈՒԼԹԱՆ ՀԱՄԻՏ ԲԻ

Բարեպատեհ զուգադիպութեամբ մը՝ այս անգամ Գարունն է որ, երփներանգ թեւերուն վրայ բարձած, կը բերէ մեզի վեհ. Սուլթանին ծննդեան տարեդարձը:

Սասակաշունչ ձմեռէն անմիջապէս ետքը գալով ու կերպով մը եղանակին խառութիւնները վերջացնելով՝ այս ցրն-ծառիթ տօնը կրկնապէս բարեգուշակ թուական մը կ'ըլլայ մեզի համար և Մալի սրտանց կ'ողջունէ զայն:

Մեր տկար գրիչը անզօր է թուելու այն բազմազան մեծ ձիւքերը որոնք օժտուած է թուրքիոյ վեհափառ ինքնակալը: Իր ամեն ժամու հոգածութեան առարկան չէ՞ միթէ ժողովուրդը՝ որ իր նուիրական ձեռքերուն մէջ՝ աստուածային աւանդ մըն է:

Իր ողորմած ու հայրախնամ հովանաւորութիւնը՝ այս մեծ կայսրութեան մէջ բնակող ամեն կրօնքէ ու ամեն ցեղէ հասարակութիւններուն պէտք է միշտ, ճիշդ ինչպէս պէտք է արեւը մշակին ու փարոսին փրկարար ըյսը նաւաստիին համար:

Իր մեծագործութիւնները, որոնք աչքի առջեւ են, չպիտի թուենք մի առ մի. բայց ընդհանուր ակնարկ մը միայն նետելով, ինչ մեծ կենդանութեան ու զօրութեան նշան մը կը տեսնենք ամեն կողմ, որ իր անդուշտանքերուն,

իր մշտակայ հոգածութեանն արդիւնքն է:

Անձամբ ու արթուն հսկելով այս ընդարձակ պետութեան գլուխը, Իր հանգիստը զոհելով երկրին բարօրութեան վերաբերող խնդիրներու, Իր հզօր աջը կարկառելով հոն ուր անմեղ մը կայ պաշտպանելու ու թշուառութիւն մը ակտիւելու համար, մեր վեհափառ կայսրը՝ իր ծննդեան տարեդարձը իրաւամբ հանրային ուրախութեան ու մաղթանքի առարկայ դարձուցած է:

Հայերուն համար, որք իր անսահման գլխութեան ու ողորմութեան երախտաւորեալներն են, այս տարեդարձի տօնը՝ հանգիստաւոր առիթ մը կ'ըլլայ աղօթելու ու մաղթելու որ վեհափառ Ապտ-իւլ-Համիտ Բ. ի շուքը չպակսի իրենց վրայէն ու կարող ըլլան Անոր հովանուոյն տակ իբրեւ հաւատարիմ Օսմ. հպատակ ու քաղաքացի իրենց պարտքը հաւատարմաբար ճանչնալով յառաջանալ լուսաւորութեան ճամբուն մէջ:

Մալի հայ մամուլին երէցը իբրեւ օրաթերթ և միանդամայն կրտսերը իբրեւ գրական հանդէս, այս զգայուններուն ու այս համոզման թարգման կ'ըլլայ կրկնելով իր ազգակիցներուն հետ սրտագին,

ՇԱՏ ԱՊՐԻ ՎԵՀ. ՍՈՒԼԹԱՆ

ԱՊՏ ԻԿԼ-ՀԱՄԻՏ Բ.

Եւ շատ քան

ՎԵՐԱՇԻՆՈՒԹԻՒՆ, ԲԱՅՑ ԵՐԲԷՔ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ

Ազգային լուրերու տափակ չարքին մէջ, լուր մը, մոռցուած համարուելու չափ հին, որ մէկէն այժմէութեան հազուադէպ տիտղոսին կ'արժանանայ մեր մեր մէջ՝ ապահովապէս ազգային Պատրիարքարանի վերանորոգման լուրն է:

Լրագիրները հաղորդեցին արդէն թէ քանի մը ճարտարապետներ Պատրիարքարանի արդի շէնքը քննելէ յետոյ, կատարուելիք վերանորոգութեանց եղանակին մասին իրենց յատուկ տեղեկագիրները պատրաստելու վրայ են ելեր նոյն իսկ:

Ձեռ գիտեր թէ ճարտարապետները ինչ պիտի ընեն վերանորոգման համար, բայց ինչ որ առանց ճարտարապետի մը յաւակնութեան ներելի է անշուշտ մտածել այս խնդրոյն մէջ, սա՛ է որ Ազգ. Պատրիարքարանը վերանորոգում չվերցըներ, զայն վերաշինել միայն կարելի է: Կան կարգ մը առարկայներ տծեւ, տգեղ, կոշտ, որոց վրայ աւելցած ամեն գեղեցիկ յաւելում, առարկան չգեղեցկացներ երբեք, բայց ինքզինք կ'այլանդակէ միշտ. պիտի ընդունիք թէ այս կարգէն է Ազգ. Պատրիարքարանի արդի շէնքը. արուեստական ամեն յաւելումը այնքան կրնայ գեղեցկացնել այս դարաւոր շէնքը՝ որքան պաճուճանքն ու չարքը՝ խռճած ու ի բնէ տգեղ կին մը:

Ազգային Վարչութիւնը պէտք չէ որ այս վերաշինութենէն խրաչի գլուտ դանձային նկատողութիւններով, ընդհանուր հանգանակութիւն մը, որուն պէտք է մասնակցին մեծն ու պզտիկը, ու պզտիկը մասնաւոր (չի ասոնք բաղմամբ են), կրնայ հայթայթել մեր Պատրիարքարանի վերաշինութեան բոլոր ծախքը. ամեն ազգային իր «լուման» նուէրի մը յաւակնութեամբ չէ որ պէտք է տայ այդ հանգանակութեան՝ այլ իբր ճշմարիտ «պարտք» մը, «տուրք» մը պէտք է որ բերէ յանձնէ: Ազգային Վարչութեան համար գեղեցիկ առիթ մը կը ներկայանայ ահա մասնաւոր ծառայութիւն մը մատուցանելու, իր ձեռնբերցութեանը համար յատուկ երախտագիտութեան արժանանալու, և պատուական

Վարչութեան մը յիշատակը ձգելու միանգամայն: Առիթը փորձիչ է: Ենթադրելով իսկ որ մերայինք չենքին սկզբնաւորութեան օգնելու մէջ ծուլանան, կարելի՞ է որ, արժանապատուութեան ամեն զգացումներն ալով, կիսաւարտ ձգուի գործ մը, եթէ արդէն սկսուած ըլլայ ան. պէտք չէ վերջապէս շատ արհամարհել սա սովորական դարձած առածը որ կ'ըսէ. «գործի մը սկսիլ՝ կէս ընել է զայն, կէսին հասնիլ՝ աւարտել է զայն»:

Ազգային Պատրիարքարանի վերաշինութեան առթիւ շատ բան կարելի է ըսել թերեւս. կարելի է, զորօրինակ, պահանջել իրաւամբ որ ուրիշ վայր մը փոխադրուի այն, յարաբերութեանց լաւագոյն կեդրոնի մը. մէջ բայց ինչ որ յօդուածիս միակ առարկան ընել կ'ուզեմ, սա է որ՝ Ազգ. Պատրիարքարանին եթէ դաշուի, պէտք է որ քակելու վերաշինելու համար ըլլայ այն և ոչ թէ նորոգելու:

Ո՞վ մենէ ազգային արժանապատուութեան վիրաւորանք մը կրած չէ մոռնելով ներս այն ոլորմելի, փտած ու բնթի շէնքէն՝ որ Հայոց Պատրիարքարանը կը կոչուի. Պատրիարքարանի արդի շէնքը ամեն բանի կը նմանի բացի Պատրիարքարանէ մը: Հիւանդանոցը Ազգին Տունը կոչած են, բայց ազգին ճշմարիտ տունը Պատրիարքարանն է ապահովապէս, ուր մեր առանձին գործերը կը տեսնուին, ուր մեր այլ և այլ ժողովները կը գումարին, և որուն, ինչ որ աւելին է, տէրը կամ եթէ կ'ուզէք, մեծարոյ հիւրն է Ս. Պատրիարքը: Կէս դարէ ի վեր ամեն բան կը վերանորոգուի մեր մէջ, չենք, հաստատութիւն, և ներելի՞ է որ Հայոց Պատրիարքարանը չարանակէ մնալ զգուշիկ կերպով տգեղ շէնքի մը տակ որ նախապատմական շէնքի մը ամեն փտութիւններն ունի, բայց անոր պատմական արժէքը երբեք: Այդ շէնքին նմանները թերեւս Պատրիարքի մէջ գտնէք միայն, լքեալ, մոռցուած թաղի մը խորը, տասը տունուոր հրէայ մէկէն պատուպարելով և ամսական չորս մէծիտիյէ վարձքով մը:

Ատենին Ազգ. Հիւանդանոցի վերաշինութեան առթիւ ըսուեցաւ թէ, ազգային արժանապատուութեան տեսակէտով ալ հարկ էր փառաւոր կառուցանել այդ շէնքը:

քը, զի օտարները պիտի երթային այցելել զայն, և անով գաղափար մը կազմել մեր հասարակութեան վրայ. քա՛ջ է. ուրեմն ո՞րքան աւելի պէտք է փառաւոր կերտել Ազգ. Պատրիարքարանը, ուր մըտնող օտարը, իբր հետաքրքիր այցելու մը եկած չպիտի ըլլայ, այլ իբր հիւր մը զոր պարտաւոր ենք մասնաւորապէս պատուասիրել:

Քանի մը տարիներու յարաբերապէս կարճ միջոցին մէջ, մեր հասարակութիւնը Բերա, Ղալաթիա և Նէտի-գուլէ հսկայ շէնքեր կառուց, որք զիրար գերազանցեցին իրենց հաստակուռ հանգամանքովը: Պատրիարքարանը որ կեդրոնն է, որ կերպով մը համադրութիւնն է մեր ազգային բոլոր հաստատութեանց, ի՞նք միայն պիտի յարատեւէր մնալ շէնքի մը տակ՝ որ շէնք չնորհք չունի, որ շէնքին անունը միայն կը կրէ և որ վերջապէս իր բնակիչներէն ձանձրացած ըլլալ կը թուի ու բնակիչներն ալ իրմէն: Եւ արդարեւ այս տպաւորութիւնը ունեցած չէ՞ք ելնելով անոր խարխուլ ճռնչող սանդուղներէն վեր:

Ճաշակի, պէտքի և ուրիշ խնդիրները մէկ կողմ, մեզի համար ամեն բանէ առաջ ազգային նախանձաշուղթեան խընդիր մը պէտք է ըլլայ մեր Պատրիարքարանի շինութիւնը. եթէ կ'ուզէք, պտոյտ մը ընենք Ոսկեղջիւր — մինչեւ Ֆէնէր երթալու հարկ չկայ — նախանձեղութեամբ սախրօստ շէնքին վրայ որ Ֆէնէրի Յունաց Պատրիարքարանն է. բայց զիտեմ առարկութիւններդ, յոյն հասարակութիւնը հայ հասարակութենէն աւելի հարուստ է. շատ աղէկ. դիտենք այն ատեն հռովմէական Հայոց Պատրիարքարանն ի Սաբըզ-Աղաճ, մեր ուշադրութենէն սա կէտն ալ չվրիպեցնելով թէ, հասարակութիւն մը — ինչպէս հռովմէական Հայոցը — որուն անհամեմատ կերպով նշուազ բազմաթիւ են անդամները, միշտ աւելի դժուարութեամբ կրնայ ի գլուխ հանել մեծածախս ձեռնարկներ, քան աւելի բազմանդամ հասարակութիւն մը, ինչպէս մերինը:

Եթէ կարեկցութեան զգացումն էր որ մղեց զմեզ Ազգ. Հիւանդանոցը

կանգնելու, ապահովապէս նախանձախնդրութեան ոգին է որ պիտի վերականգնել տայ մեզ մեր Ազգ. Պատրիարքարանը:

Ու կը մտածեմ նոյն իսկ. մեր Պատրիարքարանը աւելի դիւրութեամբ պիտի կառուցանենք քան մեր Հիւանդանոցը, վասն զի արժանապատուութեան զրգիռն է որ քիչ մ'ալ ցուցամոլութեան խառնուած, ժողովրդի մը ինչպէս անհատի մը զգացումներուն մէջ միշտ աւելի մեծ տեղ մը կը բռնէ քան թէ կարեկցութեան զգացումը նոյն իսկ:

ՏԻԳՐԱՆ ԿՍՄՍԱՐԱԿԱՆ

Տարի մը կայ որ Եղիա Տէմիրճիպաշեան սրտողած էր ամենուս հետ, մարդոց ու Աստուծոյ դէմ. իր շուրջը եռացող գրական գործունէութիւնը՝ այս զարուուղութեան ոգին անդործութեան, իր բառով, գործառնացութեան տարած էր. այս դարձը՝ *dolce far niente* հեշտութեան համար չէր. կը կարծեմ որ իր հանգիստը ուրիշներու վատապէն շատ աւելի տաժանելի էր:

Փացինք գտանք զինքը, գտանք իր մոլորուած ակնարկը, իր սեւեռած միտքը, իր ժխտական իմաստասիրութիւնը զոր Եղիան չճանչցողները միայն՝ մառախուղի մէջ ծրարուած կը կարծեն:

Խօսեցանք, վիճեցինք ու կռուեցանք, ինչպէս կը պատահի միշտ երկուստեք յամառ մարդերու մէջ ու այդ օրէն միտքս զրի վրէժ լուծել իրմէ, իր իմաստասիրութենէն, իր խուսափող, պահուրտող, սըր-դողող մարդու քմահաճոյքներէն:

Յետագայ քերթուածը յանձնած էր ինձ՝ Տիրան Քելէկեանի խրկելու խնդրքով. բայց Տիրան Քելէկեանի բնակարանն ալ իբրեւ «Մասիս»ի ճամբիտ աշխատակցի բնակարան, իմ ու Ֆինտրեանին տանը պէս, այրած ոչնչացած էր: Ո՞ւր գտնել այսուհետեւ Քելէկեանը, եթէ ոչ «Մասիս»ին մէջ. ու խորհեցայ որ «Մասիս»ին յանձնելով քերթուածը, անվրէպ իր հանցէին կը թրկէի ինձ վստահուած աւանդը:

Գ. Զ.

ՀՈՒՆԿ(1)

ԱՌՏԻՐԱՆՔԻ ԳՅՈՒՆՆԵՐՆԵՐ

Հո՛ւնկ, կարող էսմ սեւեռեկ
Աչքս ի վերայ գազաթանց,
Ոյր յար ածին՝ բարձրանան՝
Բարեբաստիկ ու խրո՛խտ,
Ոյր շող ըմպեն ու շուր տան,
Ուր թխսեն դիր եւ արծուիր:

Ես մահուանէդ ի վեր, Հո՛ւնկ,
Անձո՛ւկ ուղւոյն կը խորհիմ,
Ուր չը կոխեր մարդկան ոտը,
Ուր չը հոսեր յուղիս անձրեւ,
Ուղին՝ նախնեաց անժամօթ,
Ուղին՝ գործիք զըլխատման...
Ես ա՛յն ուղւոյն կը խորհիմ
Քու մահուանէդ ի վեր, Հո՛ւնկ:

Ձոյգ կորագիծն այն փայլուն,
Որպէս օձ մը տափակցած
Այլ տակաւին հողէն բարձր,
Իւր ծիածանն համազոյն՝
Գորշ ծիածանն իւր սողուն՝
Աչացս առջեւ կը պարզէ
Իբրեւ հարցում մ'անվախճան
Կամ պատասխան մ'անողոր՞...:

Գիծն ասուպին խեղկատակ,
Ազամանդեայ մազն արփոյն,
Աստղափոշւոյ լայն ճամբան՝
Ուր կոյս անուրջը պսպրդան,
Կամ փայլակին զիծ բեկբեկ՝
Լո՛յս բուրգերու շարական,
Աչացս համար... յիշատակը
Են մահուանէդ ի վեր, Հո՛ւնկ:—

Անհուն ծերի մը զոյգ մազ՝
Խոկմանց շոգւով ներմըկցած,
Ալեւոյթին պէս անշարժ,
Երեւոյթի պէս խուսող,
Կորածըգի աչքիս տակ
Որպէս հարցում մը Սփինքսին
Ե՛ւ երկաթեայ պատասխան...:

(1) ՄԱՍԻՍԻ ընթերցողները կը յիշեն որ Հո՛ւնկ այն երիտասարդ ու դժբաղդ զրաշարին անունն է որ բանի մը տարի առաջ սեւ յուսահատութեան վայրկենի մը մէջ անձնասպան եղաւ, իր զուլիւր, իր շուարած գլուխը ջախջախել տալով սըրընթաց կառախմբի մը անիւներուն տակ, երկաթուղւոյ գծին վրայ:

Եղիարին երրորդ քերթուածն է այս հէզ անձնասպանին վրայ:

Թրւի հարցնել ինձ «Է՞ր կեաս,
— Չայլո-Հարօլտի դա՛ռն հարցումն —
Կեանքն եթէ քեռ մ'է քո յուս:»
Թրւի հարցնել ինձ. «Հո՛ւնկէն
Միթէ նըւա՞ց ես անյոյս,
Եւ դու, զըրո՛ղ անուանի,
Գրաշարէն նըւա՞ց քաջ:»
Անխուսելի այս հարցումն
Ուղղէ խուսող ինձ ուղին
Քու մահուանէդ ի վեր, Հո՛ւնկ:

Ե՛ւ անողոր պատասխան
Անշարժ ուղին է հարցմանցս. —
Քանզի ե՛ւ ես՝ սրտաթուլն,
Մերթ զոյգ զըծին հարցընեմ.
«Ուր յանգիս, օ՞ժ անզըլուխ,
Որ չը կայիր դրախտին մէջ.
Ի՞նչ, ըստեղծումս ծ դու մարդոյն,
Մեզ պիտի տաս փոխարէն...»

— «Ես անդունդին կը յանգիմ...
Եւ, եթէ գլուխդ ինձի տաս,
Անմահ կ'ըլլաս փոխարէն...»

ԵՂԻՍ ՏԷՄԻՐՃԻՊԱՇԵԱՆ

Ս Ի Ր Ե Մ Բ Ա Յ Ը

Կը յիշէ՞ք որչափ եռանդով սերտեցինք
զայն Քարաքաշեան քերականութեան մէ-
ջէն, աշխարհաբար թարգմանութիւնովը՝
«Կը սիրեմ, կը սիրես, կը սիրէ», և ետ-
քը՝ երբ ֆրանսերէն *aimer*ն սովորել սկը-
սանք, գերանուններն ալ աւելցնելով՝
«Ես կը սիրեմ, դու կը սիրես, նա կը սիրէ»:

Սիրոյ դաղափարը այն ատեն անորոշ
բան մ'էր մեզ համար, զոր մեր խաղե-
րուն ու հաճոյքներուն կը կցէինք. զմեզ
մեր ծնողաց կապով զգացումը՝ վախի և
պատկառանաց զգացմանց հետ միացած՝
կարծես բան մը կը պակսեցնէր սիրոյ ան-
հունութենէն:

Քիչ մը ետքը, երբ ֆրանսական գրա-
կանութեան զուլիս-գործոցները՝ Գորնէյլի,
Րասինի, Վալթերի գործերն սկսանք կար-
դալ, փոքրիկ զարթնում մը տեղի ունե-
ցաւ անշուշտ մեր մտացմէջ. միզամած, տար-
տամ զարթնում մը սակայն. այս գործե-
րուն մէջ սէրը կը ներկայանար մեզ իբր
մարդկային կեանքին վրայ ազդող զօրու-

թիւներէ մին , բայց ո՛չ իբր այդ զօրութեանց ամենէն ազդեցիկը : ԺԶ, ԺԵ, ԺԸ զարեւու ֆրանսացի բանաստեղծները՝ որք սէրը իւր ամենէն ազնուացուցիչ գերին մէջ ներկայացուցած են, այնքան միայն ցուցուցած են անոր կրքոտ բնութիւնը, որչափ որ համեստ կին մը արժան կը տեսնէ իւր «համակրանքը» արտայայտել իւր ամուսնոյն՝ քաղաքավար ընկերութեան մը մէջ : «Սիրա»ի, «Հօրաս»ի, «Մերօր»ի, «Իֆրիթէն»ի մէջ՝ սէրը աւելի պատրուակ մ'է՝ որմէ կ'օգտուին այդ գործերուն գիւցազները մեծ խօսքեր ըսելու համար , քան անգուստ զգացում մը՝ որ զիրենք կը վարէ իւր բռնի , անդիմադրելի զօրութեամբը : Սիրոյ բոլոր վսեմութիւնը կայ այս գործերուն մէջ , սակայն սիրոյ կրակը՝ ո՛չ : Եւ մենք, հակառակ մեր երեւակայութեան զօրութեանը, անկարող էինք հասկնալու այն ստեն այդ չափազանց համեստ բառերուն տակ սքողուած զգացման մեծ ոյժը :

Բուն զարթնումը տեղի ունեցաւ , միայն , երբ պատահեցիւ թեան —այդ գերազանցապէս միջազան հատակին— թեւակալած՝ ոկտանք արեւմտեան գրականութեան սիրային արտագրութեանց ընտրեւազոյնները՝ «Գամէլիազարդ Տիկին»ը , «Ամօրի»ն , «Մանօն Լէսքօ»ն , «Վէրթէր»ը կարդալ . հիմա սէրը կը ներկայանար իր գերբնական , զգլխիչ յատկութեանը մէջ՝ զոր կը չափազանցէր թերեւս մեր կոյս մտքերուն աւինը . մեզմէ ո՞վ ինքզինքը Տիւլիանէի մը համար ամեն զոհողութեան կարող չէ զգացած երկու Տիւմաներու , Բրէվոյի , Կէօթէի բոցեղէն սողերուն ազդեցութեանը տակ . և ո՞վ անդիմադրելի փափաղ մը չէ զգացած սպանիացի ասպետի մը պէս առաջին հանդիպած կնկանը առջեւ ծնրադրելու՝ սիրտն ու կեանքը առաջարկելու համար անոր : Սիրային ի՛նչ արբշիւ երազներ , ի՛նչ գերբնական նրւագոյներ , ի՛նչ անորոշ բանաստեղծութիւններ պաշարած են մեր մտքերը այդ երջանիկ օրերուն մէջ՝ ուր *struggle for life*ի դժնդակ վարդապետութիւնը , և Շօքէն-հաւերի յուսահատիչ փիլիսոփայութիւնը դեռ չուսած , հաւատքներու քաղցրադոյնը , սիրոյ հաւատքը ունէինք :

* * *

Եւ հիմա , որ զգացմանց ամեն չափազանցութիւն —ամեն աւին պիտի ըսէի— ի բաց վանած , մեր մամիկներու բացատրութիւնով «չենք չնորհք մարդու» գեր կը կեղծենք աշխարհի տեսարանին վրայ , հետաքրքրական է քննել թէ ի՞նչ եղած է սիրոյ զգացումը մեր երիտասարդութեան մէջ , ի՞նչպէս կ'ըմբռնենք սէրը և ո՞ր աստիճան ունինք անոր պաշտամունքը :

Առանց անակնկալ մը ըսելու յաւակնութիւնը ունենալու , պէտք է յայտնեմ թէ բարոյականի (բարոյականի «խտէալ»)ին և ոչ պառաւանքներու ընթացիկ բարոյականին) հիմը կը նկատեմ սէրը , նոյն իսկ իւր չափազանցութեանցը մէջ :

Այնքան մեծ է սիրոյ բարոյացուցիչ ազդեցութիւնը մարդուն վրայ՝ որ առանց անոր՝ հոգին բարձրացնող զգացումները չուսով կը ցամքին կը չորնան ինքնապաշտ տրամաբանութեան մը նախադասութիւններուն մէջ : Եւ անկումը մեծ է անոնց համար որ սիրոյ այս մեծ զօրութեանը տեղ , հեշտութիւնը , ազտօտ հաճոյքները միայն կը ճանչնան , որք «սէր» բառը առանց կարմրելու չկարենալ արտասանելու չափ գէշ ըմբռնում մ'ունին անոր վրայ : Եւ ո՞րը Գաղանօվաի և տը Սառ մարքիզին գործերովը սնած՝ մեր կուլիւններ և մեղկութիւններ կը պատկերացնեն իսկոյն իրենց աչաց առջեւ , երբ սիրոյ վրայ խօսուիլը ըսեն . հիւանդ միտքեր որ սէրը կը փնտռեն իւր գերեզմանին՝ հեշտութեան մէջ :

Սիրոյ այս տեսակ ըմբռնումը հասարակութեան մը համար փտումի ամենէն մեծ նշանն է , որոյ դէմ՝ մեծ անդրադարձման մը պէտք կայ , եթէ չենք ուզել որ «խանութպան»ի , «գործ գիտցող մարդու» բարոյականը , շահու և հաշուի այդ հրէշային զուգորդութիւնը , որ արդէն արմատ ձգած է մեր մէջ՝ բոլորովին զօրանայ :

Արդ , որչափ քիչ տեղ կը բռնէ սէրը մեր երիտասարդութեան սրտին մէջ , քանի՜ անկարեւոր է անոր ազդեցութիւնը մեր գործերուն վրայ :

Ուշադրութեամբ քննեցէք բոլոր այն երիտասարդները որք «ամուսնանալի» (ma-

riable) են և բոլոր այն աղջիկները որք ամուսնանալ կ'ուզեն։ Ամեն բան կրնաք գտնել անոնց յարաբերութեանցը մէջ, բայց սէրը երբէ՛ք հետազօտեցէ՛ք կատարուած ամուսնութեանց որոշիչ պատճառները, սէրը դուն ուրի՛ք կայ հոն . երիտասարդը ըստ հասկցած է իւր ապագայ աներոջ հարստութիւնը, հետաքրքրութեամբ քննած է օրիորդին օտար լեզուներու մէջ և դաշնամուրի վրայ կարողութեան աստիճանը. անոր ձեւային (plastique) գեղեցկութեանց վրայ տեղեկութիւն ստանալու ալ հետամուտ եղած է թերեւս . սակայն մտքէն իսկ անցուցած չէ անգամ մը ինքն իրեն հարցնելու թէ իրօք կը սիրէ՞ այդ աղջիկը : Եւ ենթադրելով որ ուրիշի մը համար սիրոյ պղտիկ նշոյլ մը (ինչո՞ւ հափազանցեմ, նշոյլը միայն յուսալի է արդի դարավերջիկ երիտասարդութեան սրտին մէջ) գտնէ սրտին խորը, հաշուի դօրութիւնը չնչած է զայն իսկոյն, որովհետեւ գործերը գործեր են վերջապէս. և, աւա՛ղ, սէրը գործ մը եղած է մեզ համար :

Միւսնայն բանը տեղի ունեցած է աղջկան կողմէն ալ . առաջին փնտռուած բանը՝ երիտասարդին դրամական կարողութիւնը եղած է . բժշկին և դեղագործին ալ դիմած են հաւանականաբար էրիկ կոչուած կալուածին ո՛ր աստիճան հաստատուն ըլլալը հասկնալու համար . եւ եթէ աշխարհիկ կեանքի կեղծ քաղաքավարութենէն ալ բան մը չպակսիր երիտասարդին, կրնայ վստահ ըլլալ թէ «իւր գործը կարգին է» :

* * *

Ահա քիչ բացառութիւններով այս է սէրը մեր արդի ընկերութեան մէջ . կատարի հաշուագէտներ դարձած՝ անվերջանալի համեմատութիւններու փոխած ենք զայն, ցնորական + մը, բարեկեցիկ կեանքի կեղծ երեւոյթը գտնելու համար :

Աղքատութեան, հիւանդութեան, բարկութեան համար, և ուրիշ շատ մը պատճառներով անձնասպան եղողներ պիտի գտնուին մեր մէջ, սակայն սիրոյ համար՝ երբէ՛ք : Մեր սիրտերը սիրոյ ազգած հաս-

տատամտութենէն, սիրուած էակի մը երջանկութիւնը պատրաստելու յաւակնութեան տուած զօրութենէն զերծ պիտի տի մնան միշտ . զիւրին հաճոյքները եւ զիւրին յաղթանակները պիտի փնտռենք ամեն տեղ : Սէրը կեանքին նպատակը ենթադրելու ոյժը չպիտի ունենանք և ոչ ալ հոգւոյ այն մեծութիւնը՝ զոր այդ ոյժը կուտայ :

Եւ այնքան ինկած են մեր զգացումները սիրոյ նկատմամբ, որ եթէ գտնուին երկու էակներ որ սիրոյ բարձր «իտէալ»ը ունենան, որ տարիներով համբերեն խոչընդոտներու, դժուարութիւններու յաղթելու համար, իսկոյն չարախօսութիւնը պիտի սկսի իւր դերը . ամեն բան պիտի ընենք, որպէս զի երկու սիրահարները իրարմէ անջատուին. դարավերջիկ երիտասարդները՝ որոց համար սէրը «մօտա»ն անցած բան մ'է, պիտի ծաղրեն զանոնք, ծերերը՝ ամենէ զաղիր ենթադրութիւնները իբր իրականութիւն պիտի պատմեն : Եւ պէտք է հաւատալ որ հոգւոյ հազուադիւտ զօրութիւն մը ունենալու են այդ էակները՝ եթէ բոլոր այս ժխտական ազդեցութեանց հակառակ, կարենան անփոփոխ պահել իրենց զգացումը, սիրոյ վրայ իրենց ունեցած հաւատքը :

* * *

Քանի որ սիրոյ հաւատքը չունինք, բնական է որ գեղեցկին, բարիին և օգտակարին հաւատքներն ալ չունենանք :

Այսպէս, կըրը պիտի պակսի մեր մէջ հաւատքի այն արբուածութենէն՝ որ Ս. Վէնսան տը Բօլներ կ'արտադրէ . արհեստակիցը և արհեստաւորը՝ արտիներով ամեն զրկանքի տոկալու չափ իրենց արհեստին հաւատքը չպիտի ունենան, և բանաստեղծին աւիւնը չպիտի երթայ մինչ այն կեթերացումը՝ նոր Պէշիթաշլեան մը, նոր Դուրեան մը արտադրելու չափ :

Միջակ արարածներ պիտի ըլլանք, զորս հաշիւը միայն կը վարէ խամաճիկի պէս : Եւ արտերու մէջ բուսնող տկար տունկերու նման՝ պիտի մեծնանք ու պիտի չորնանք՝ առանց կեանքի արևը՝ սէրը՝ զմեզ լուսաւորելու ու կենդանացնելու :

ՏԻՐԱՆ ՔԵԼԷՅԱՆ

ԾԱՆՈԹ ԴԵՍՔԵՐ

ՅՈՎ. ՍԵՓ. ԵՌԵՄՈՒՅԵԱՆ

Գիտուն մը, և որ աւելին է, իմաստուն մը:

Յովսէփ Եռասուֆեան, այն վարար ջուրի հոտանքներէն չէ որոնց թաւալումը՝ երկու գիւր եղերքներուն անձկութենէն, կամ հետեւած ճամբուն անհարթ ըլլալէն՝ աղմկայոյց ու մեծաշառճ կ'ըլլայ, ու չադրութիւն կը հրաւիրէ: Այլ վեհինաճեմ գետի մը հանդարտասա՛հ ու անշուշտ ընթացքին կը նմանի որուն արգասաբեր ջուրերը իրենց առուին կը պատշաճին, եւեւ կամ պակաս չեն վար, և որոնք կայուն ու անշարժ կը թուին հարեւանցի դիտողի մը աչքին:

Իր կարգաւորեալ կեանքը ու գործունէութիւնը չեն ճանչնար անակնկալը, այս չափազեւոր որ սիրուն կնոջ մը ետեւէն հետապնդելու պէս ամեն հաշիւներու մէջ անծանօթը կ'որոնէ միշտ ու չերը կը փնտռէ, ամենուրեք կը հալածէ, երեւան կը հանէ պահուրտած ամեն ծակերու, ամեն ծպտումներու մէջէն, իր մտերմութեան շրջանակին մէջ չընդունիր զանոնք:

Իր բոլոր գոյութիւնը կը նմանցնեմ այն յառաջատուութեան կարգերուն, որոնց մէկ օղակէն ամբողջը կը դուշակուի:

* * *

Շատերը տեսած են, բայց քիչերը կը ճանչնան դինքը: Իր սակաւախօս մարդու դուշաւոր ու ժուժկալ ձեւերը, ձայնին մեղմ ու միօրինակ հնչիւնը, մօրուքին կանոնաւոր շրջագիծը, հաղուստին անփոփոխ ձեւերը միայն տեսնող մը երիցական քարոզիչի մը տեղ պիտի առնէր դինքը, ու ճշմարիտ հարցուկ մը ըլլալ պէտք է գուշակելու համար ա՛յ չափազանց համեստութեան տակ՝ մեր ազգին մեծագոյն գիտնականը:

Չափական ու բնական գիտութեանց այս մեծ վարպետը երիտասարդ մըն է դիրուկ, միջահասակ, ճիւղ այն մեծ ջու-

թակներուն պէս զորս այնքան ճարտարութեամբ կը զարնէ. վասն զի յաջող ջութակահար մըն է նաեւ այս գիտնականը:

Կը մտածեմ սակայն որ իր ծովածաւալ հմտութիւնը յուսահատեցուցիչ բան մը ունի: Ի՛նչ տարօրինակ առանձնութիւն է՝ ան ուր լքուած կը մնայ մարդ, երբ այդքան կը հեռանայ սովորական իմացականութեան սահմաններէն:

Յետին միջատին կեանքը ճանչնալ ու կարող ըլլալ միանգամայն ամեն աչքերու առաջ լուսաւոր դունտի մը. կամակ շաւիղը ճշդեւ երկնից մէջ՝ անհունապէս փոքրը ու անհունապէս մեծը ըմբռնել. հիմակուց գիտնող տնայալը՝ որ փառաբան էր, ներկան որ աստուերն է, և ապագան որ լոյսը պիտի ըլլայ. ո՛չ, այս ամէնը մեկանց չպիտի ուզէի տեսնել մէկ մտքի մը մէջ:

* * *

Յովսէփ Եռասուֆեան այն գիտուններէն չէ որ հին ատենի մոգերուն պէս իրենց սորվածները կը ծածկեն պարզ մահ՝ կանացուներէն: Ընդհակառակը, իր ջանքը եղած է գիտական յօդուածներով որ «Արեւելք»ի ամենէն պատուաբեր էջերը կը վազմեն, գիտութիւնը ռամկացնել, հասկնալի ու մատչելի, նոյն իսկ հրապուրիչ ընծայել ամեն անոնց՝ որոնք կը կարծեն թէ չոր ու ցամաք անապատ մըն է ան: Եռասուֆեան հովասուն ուղտորաները ցոյց կուտայ մէկիկ մէկիկ, ամեն մէկ քայլին, այնպէս որ ամայի ու դժնդակ համարուած ուղեւորութիւնը՝ Բարիզի պուլվարի մը վրայ շրջադայելու չափ հաճելի դարձնելու դաղանիքը կը գտնէ:

Իրմէ առաջնորդուած, և իրեն ունկնդրելով կը հետեւինք ճամբուն որ Գիտութեան համար իրմէ աւելի արժանաւոր մը չէր կրնար բանալ մեր գրականութեան մէջ, ճամբայ՝ որ իր շնորհիւ միշտ կ'արձ, միշտ անբուական կը թուի մեր աչքին. հետաքրքրութիւննիս կ'արթննայ բայց չի յագենար ու Հազար ու մէկ Գիշերներու հրաշալեաց պէս շարունակութիւնը լսելու անհամբերութեամբը զմեզ կը շարժարէ:

* * *

Գրականութիւն մը կայ հիմա հրապարակին վրայ որ, ճշմարիտ հրապոյրներէ զուրկ կ'նոյ մը պէս, փերեւտի, ներկի, չպարի կը կարօտի միշտ. ո՛չ մաքուր հոգի մը ունի, ոչ գեղեցիկ մարմին: Իր յաջողութիւնը, ծեքծեքումէն է. իր հոսկէ հոնկէ փոխ առնուած գոյներուն փայլը՝ ցորեկուան պայծառութեանը չգիմադրեր, բայց գիշերը, ջահերուն արծակած լոյսին տակ, զիմացինը պատրելու կը բաւէ:

Եռսուֆեանին գրականութիւնը անոնցմէ չէ. իր հրապոյրը իրն է բոլորովին. արդուզարդին անհոգութիւնը՝ իր ստոյգ գեղեցկութեան գիտակցութեամբն է, վեհապանծ գեղեցկութիւնը Գիտութեան: Այս հրապարակագիրը հիշուող ունի բռնադատիկ ու արուեստակեալ. քեզ համայնութիւնը պէտք չունի աչքի քրթթումներու: Իր նայուածքը պարզ ու վճիռ է, ուր ճշմարտութիւնը կը ցոլայ ու միշտ կը գրաւէ զքեզ. այս է իր ոճը:

Իր լուրջ ու ծանրախոհ գրականութիւնը խոփուութիւն չբուրեր երբէք. զայն կարգացած պահուս, տողերուն մէջ կ'ընդունը մարեմ խնդամիտ ու կատակասէր մարդու մը շուքը. և իրօք Յովսէփ Եռսուֆեան մեր ամենէն նրբամիտն է:

Եւ իր բարոյական նկարագրին վրայ աւելցուց այս զուարթութիւնը երկնաբերձ լերան մը վերելքին մէջ, ամայի ու քարոտ կողին վրայ չսպասուած ծաղկաստանի մը տպաւորութիւնը կ'ընէ իմ վրաս:

ԳՐԻԳՈՐ ԶՃՀՐԱՊ

Ե Օ Թ Ն Օ Ր Ե Ա Կ

Բարեկենդանի վերջաւորութեամբ ու Մեծ Պահքի սկզբնաւորութեամբ խառն շաբաթ մը, — նախորդ շաբաթը, — կէս զուարթ՝ կէս տխուր, որ վերջացաւ Գատը զիւղի հրդեհովը ու այս շաբթուան կտակեց հայերէն ներկայացման մը նորութիւնն ի Բերա: Նորութիւն մանաւանդ անոր համար որ Մնակեանի ու Պէնլեանի պէս գերասպններ յօժարեցան վերջապէս, տասներեք տարի ետքը, իրենց մայ-

րենի լեզուով խօսելու բեմին վրայ. քիչ մը եւս, և քսանամեայ յոբ՛ւլեանը պիտի տօնէինք իրենց այս... մոռացման: Բայց եթէ մոռցուած յոբելանները փնտռենք, մեզ աւելի մօտիկ պիտի գտնենք ամենէն արժանաւորն ու շահեկանը, զոր Արմաշի մենաստանին բարձունքէն եկաւ յիշեցունել սրամիտն Օրմանեան, իր լեզուաբէնական յօդուածին ներքեւ թուագրելով «2 փետրվար, 41րդ տարեդարձ սկզբնաւորութեան ՄԱՍԻՍԻ»: Այս յիշատակութիւնը, որ օրը օրին երեւցաւ արդէն օրագրական օրացոյցի մը մէջ, առանց սակայն «Օրը Օրին» մը արտագրելու, կըրնար մամլոյ բոլոր աշխատաւորներուն եւ հանրութեան ալ ուշը գրաւել. թերթին բազմաշխատ տէրը՝ Պօյաճը գիւղի բարձունքն առանձնացած՝ անշուշտ ունեցաւ դառն ժպիտ մը չըթանցը վրայ, — մին այն ժպիտներէն զոր Իւթիւճեան միայն կըրնայ ունենալ, — յիշելով իր երիտասարդութեան փայլուն օրերն և այն ոսկեղինիկ երազներն որովք թերեւս հիմնեց «Մասիս»ը: Ինքը միայն կրնայ ըսել, թէ այդ քառասուն տարիներու միջոցը, որոց երեսունն անցուց գործօն տնօրէնութեամբ մը ու իրական խմբագրապետութեամբ մը, որպիսի՞ յոյսերու և յուսախաբութիւններու, բերկրութեանց ու տրտմութեանց չըջան մը եղած է իրեն համար, որ կենդանի պատմութիւն մըն է արդէն վերջին կէս դարուն: Եթէ ժամանակն անցած չըլլար, պիտի խնդրէինք իրմէ որ հաճէր բան մը գրել այս տարեդարձին առթիւ, իր խմբագրական կեանքի առաջին օրերուն յիշատակը կամ տըպաւորութիւնը: Բայց այս համարձակութիւնն ալ կը պակսի մեզ, քանի որ նոյն իսկ «Մասիս»ի խմբագրութիւնը թերացաւ այս յիշողութեան մէջ, որ հաճելի առիթ է մը աւելի՝ հաճելի պարտք մըն էր: Եթէ խոստովանութիւն մը իրաւունք կուտայ գէթ յետամնաց շնորհաւորութեան մը, սրտագին կ'ուզղենք զայն հրապարակաւ, վստահ ըլլալով թէ մեր բոլոր իրմբագիրները, — հրապարակագիրներու հին ու նոր սերունդը, — անկեղծապէս կը մասնակցի անոր ու կը մագթէ որ կարե-

նայ տօնել Իւթիւճեանի յիսնամեայ յաբելանը :

Արեւելեան Հայոց մէջ, կ'երեւի թէ, սովորութիւն չի կայ հարիւրաւոր կամ կէս հարիւրաւոր տարեթիւերու սպասել հանրային տարեդարձի մը տօնման համար . մինչ Թիֆլիզի վրացիք կը տօնէին իրենց թատրոնի հիմնարկութեան 43 ամեակը, մերիններն, յունուար 28ին տօնեցին հայ թատրոնի հիմնարկութեան 35 ամեակը :

Օրագիրները մանրամասնօրէն հրատարակեցին արդէն նկարագրութիւնն այդ հանդիսին . եթէ նոր բան մը կը մնայ մեզ զրելու, այդ առթիւ ուսածայ մամլոյն մէջ ծագած հարցն է, թէ իրաւ արդեօք 35 տարի անցած է հայ թատրոնի սկզբնաւորութենէն ի վեր և առաջին ներկայացումը 1858ին տեղի ունեցեր է ի Մոսկուա և ի Թիֆլիզ : «Տարազ» հետաքրքրութիւն ունեցեր է թերթելու «Մեղրու»ի հին համարները և 1858ի թիւերուն մէջ ո՛չ մէկ տող չէ գտեր այդ մասին . իսկ 1859 մարտ 7ին հրատարակուած է ուսանող Ստեփան Ստեփանեանի — Թելաւեցու — մէկ նամակն ուսկից կը տեսնուի որ այդ տարւոյ յունուարի 27ին «զլուխ է եկել Մոսկուայում հայերի մէջ առաջին ներկայացումը» : Այդ թղթակցութենէն քաղուած մը .

Երեւոնի Պ. Դրիգոր Մամիկոնեանի ասելով, Պ. Մամիկոնեանը վաթսուական Թաւադեանին թատրոնական ամենատաաշնակարգ խնամակալներինցն է եղել : Թիֆլիզում առաջին ներկայացումը տեղի է ունեցել 1841 թ. Վանքի առաջնորդարանին կից եղած հին դահլիճի մէջ : Խաղացել են մի քորերգութիւն, Վենետիկեցոց Ֆեդիմակութիւն : Հայ հոգեւորականութիւնն է հովանաւոր եղել այդ ներկայացման . մասնակցել են հանգուցեալ Տէր Աղէքսանդր եւ Տէր Մկրտիչ Տէր Դրիգորեանը, որ այն ժամանակ դեռ տիրացու էին, Յակոբ Կարինեանի եւ Պ. Խաչատուր Առուսեանի հետ միասին : Այդպիսով հայ հոգեւորականութիւնը թատրոնը չէ համարել երբէք հակաքրիստոնէական հաստատութիւն, ուր մշտնը արգիւլած պիտի լինի քրիստոնէութիւն քաղողի համար :

Այս անակնկալ ծանօթագրութեան — որ թատրոնի հետ կը խառնէ եկեղեցականութեան անունը — կը յաջորդեն ու-

րիշ տեղեկութիւններ որք բուն թատրոնի սկզբնաւորութիւնը կը դնեն 1859ին և ոչ 1858ին : Ուրիշներ կը հակառակին ասոր : Երեսունը չորս թէ երեսունը հինգ՝ մենք չենք կրնար ճշգրել, բայց կը տեսնենք միայն թէ այդ տօնախմբութեան մէջ չեն դրած այն ցնծուն ոգին, այն պերճ հանգիսաւորութիւնը որ իրենց յատուկ է : Տիրութեան շունչ մը անցած էր կարծես Կովկասի հայերուն վրայէն, վերջացող տարւոյն մէջ, և ո՞վ գիտէ թէ դուցէ նոյն իսկ այդ սպաւորութեան ներքեւ չէր որ յիսնամեակի մը սպասելու հոգեկան ջօրութիւնը չունեցան : Քանիներ այն հեղինակներէն, այն արուեստագէտներէն որք կը մասնակցէին այդ յօրեւանին, բաւական պաշարիւնութիւն կ'ունենային չի մտածելու համար թէ տարին որ կը յաջորդէ նախորդին, չպիտի տանի մէկ երկուքն իրենցմէ, ու տասնեակից տարուան մէջ որո՞նք պիտի մնան կենդանի ու գործօն : Աղամեանի և Ամերիկեանի պատկերները, որք կախուած էին բեմին ճակատը, յարգանքի ու հիացման յիշատակի մը հետ՝ այս ներշնչումը չէին տար արդեօք անոնց :

Իրական մահուան գաղափարն է աւելի տխուր, արուեստագէտին համար, քան մուցուելու դառնութիւնը : Այս մը տաժումը կ'ունենայի Սըվաճեան նուագահանդէսին յաջորդ օրը, երբ յանկարծ խմբագրատան մէջ տեսայ Չուհաճեանը, որ իր հիացումը գրի առած՝ կ'ուզէր հրատարակային յարգանք մը ընծայել երիտասարդ դաշնակահարին : «Զէմիրէ»ի հեղինակը, այդ դառնացեալ երաժշտապետը, որ Բարիզէ դառնալէն ի վեր կորաքամակ, մեղամաղձոտ, նիհար երեւոյթ մը առած է, վայրկեանական խանդ մը ունեցեր էր՝ առաջին ծափն ինքն սկսելով ու առաջին գնահատող դատողութիւնն ինք գրել ուղեւով : Հիանալի չէ՞ այս մեծ վարպետին ազնուութեան ու համեստութեան օրինակը . պիտի ըսէի . . երբեմն նոյն իսկ զրականութեան մէջ, փոքրիկներու տըւած օրինակին քով :

Չուհաճեանին ու Սվաճեանին անուն-

ները հարցում մը կը բերեն շատերու մտքին մէջ: Ինչո՞ւ, մեր կրթական կամ բարեգործական նուազահանգէսներու կազմակերպութեան համար, անշեղելի սովորութիւն մը դարձած է օտարներու անունով ոսկեզօծել յայտագրերը: Միթէ Ֆուռլանի մը կամ Ռօմէօ մը, — Շէքսպիրինը չկարծէք, — աւելի՞ հրապուրիչ անուններ են կամ անձնութեամբ կը նշատին դաշնամուրին առջեւ: Մինչեւ իսկ «Քօմէնտինկէր տան կողմէ Պէքթալան դաշնակի մը նուիրման» պայմանադրական պարբերութիւնը չ'մոռցուիր, առանց բռնաւ մտքէ անցնելու թէ հիմայ Բերայի մէջ ունինք դաշնակի մեծ մթերանոց մը, Յակոբեան վաճառատունը, որ Քօմէնտինկէրին չափ կրնայ հաճոյակատար ըլլալ այսպիսի հանգէսներու:

Ինչ որ չունինք Բերայի մէջ, — պիտի հաւատա՞ք, — եպիսկոպոս մը կամ վարդապետ մըն է, որ Մեծ Պահքի կիրակիներուն քարոզ խօսի: Մնայուն քարոզիչ մը ունենալն այնքան բարձր խաչալ մը դարձած է այդ մեծ արուարձանին համար, որ անոր իրականացման չաշխատուիր այլ եւս: Բայց գոնէ դառնալով, կամ հրաւիրուելով բարձրաստիճան եկեղեցական մը, մեր կրօնային այս գեղեցիկ սովորութիւնը կատարելու համար:

Ո՞վ կ'ըսէ թէ Բերացիք միայն պարահանգէսէ, երեկոյթէ ու թուղթի խաղէ կ'ախորժին: Այն ընտիր բազմութիւնը, որ զիշերը կը համախմբուի դահլիճներու մէջ, խորին ջերմեռանդութեամբ կը դիմէ կիրակի առաւօտուն, — և եթէ իզմիրլեանի կամ Օրմանեանի նման քարոզիչ մը ունենայ, իրիկուան քարոզին իսկ, — Երրորդութեան տաճարին մէջ: Ժողովուրդը, արդէն իսկ հոն է:

Բերա գալը՝ Տիգրանակերտ երթալու չափ անձնազոհողութիւն չի պահանջեր եկեղեցականէ մը, և չենք կարծեր որ գտնուի եպիսկոպոս մը կամ վարդապետ մը որ եթէ հրաւիրուի, իբր այցելու հովիւ, Մեծ Պահոց քարոզ խօսելու, անձնական տկարութեան կամ ճանապարհի ծախքի խնդիր հանէ: Իսկ Թաղական խոր-

հուրդին համար՝ վերաշինութեան մը չափ դժուարին գործ մը չէ անշուշտ այսպիսի հրաւեր մը ուղղել կամ Պատրիարքարանին դիմելը:

Կը յիշեմ հէգ Սրուանձտեանցը որ Մեծ Պահքի կիրակի առաւօտները կը քարոզէր Բանկալթիի գերեզմանատան եկեղեցւոյն, — պանդուխտներու մատրան մէջ, — ու հազիւ վեղարն հանած՝ Բերա կը փութար, իրիկուան քարոզին պատրաստուելու:

Առիթը չէ՞, նորէն դառնութեամբ յիշելու «Հնոց ու Նորոց»ի ժիր հեղինակը:

Ճշմարիտ «Հնոց ու Նորոց» մը, գրականութեան համար, Վէրթէրի թարգմանութիւնը որ քսանը հինգ տարի ետքը կ'երեւի վերստին: Մամուրեան աւելի յղկած է լեզուն ու Պէրպէրեան պատկերներով ճոխացուցած է այդ սիրուն հատորը: Առաջին ծօնը, — 1865 մայիս 3 — կը մնայ նոյնութեամբ այս երկրորդ տը պաղտութեան մէջ, ու անոր կը յաջորդէ թարգմանչին երկուող մէկ ծանօթութիւնը, — 1893 յունուար 30: Գեղեցիկ չէ՞ գուգադիպութիւնը, երբ «Արաքս»ի «Արուեստի Աշխարհ»ին հետ գրեթէ միեւնոյն ժամանակ մամուլ տակէն դուրս կ'ելլէ «Վէրթէր»ի վերջին տետրը:

Այդ վերջին տետրը, մանաւանդ, որքա՛ն յուզիչ է անոնց համար որք տասը, քսան տարի ետքը վերստին կը թղթատեն զայն. պատանեկութեան մէջ՝ անոնց հետաքրքրուողն, հիմայ, երիտասարդ, կը համակուի այդ մահաբոյր տողերով, ու կը մնայ ձեռքը ճակատին՝ չկրնալով չափել խորութիւնն ու բարձրութիւնն այդ պարզունակ գրքին: Արաքսի չափ բարեբաղդ չեմ եղած, գրադարանի մը անկիւնը պահելու համար հին հատորը, որուն պատառուն թերթերն օր մը հովին յանձնուեցան՝ թուղթերու դէպի մը հետ, և հիմա վերստին գտնելով նոյն էջերը, ձեռքիս տակ, գրասեղանիս առջեւ, աւելի փայլուն ու զարգարուն, կ'ողջունեմ զայն սիրելի յիշատակի մը պէս որ կը կենդանայնայ յանկարծ:

ՏԻԳՐԱՆ ԱՐՓԻԱՐԵԱՆ

ԵՐԳՉՈՒՅԻՆ

ԿՈՅՐ ԱՂՋԿԱՆ ՄԸ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Ա.

Մաղերուն մէջ ա՛լ ճերմակ թելիկներ ցանցնուած են , ճերմակ մը մոխրի, որ կարմրերն հետ գրկուած, միբոտ «եղմա-
յին» տակէն դուրս կը ցատքէ քունքե-
րուն և ճակարին շուրջը՝ պառուած, հին-
ցած զարդի անճաշակ երեւումով, գլու-
խը՝ ձիգ, լարուած կոյրերու յատուկ ար-
ուեստակեալ վէս գերքին մէջ. աչքերու
անհարկի թարթափում մը որ պէտք մը
չի լրացներ, այլ բնագոյով միայն ջղաձիգ
աւերակ տան մը բաց մնացած պատու-
հանի փեղկերուն կը նմանի, հովերու քը-
մահաճոյքին ձգուած, որ կը գոցուին ու
կը բացուին անգագար՝ առանց պէտքի
կամ հարկաւորութեան:

35էն 38ի մէջ կը խաղայ տարիքը:

Ազգական՝ մայր մ'ու եղբայր մը մի-
այն: Մայրը՝ հիներու այն բարեպաշտ սե-
րունդէն որ եկեղեցւոյ զանգակի ձայնին
երեք անգամ կը խաչակնքեն երեսներն մի-
ամիտ հաւատքով մը. իրենց գլխուն թըն-
ջութներն ու մատներնուն երկնցած ե-
ղունդները կը պահեն կապոյտ քուրջերու
մէջ՝ պատանքներնուն մէջ դնելու համար,
ծնօտնին՝ լաջակ կը կապեն միշտ. սեւ
ամզան կը հագնին և կեսրայրներուն հետ
մինչեւ 50 տարուայ հասակին չեն խօ-
սիր. «այո»ն, գլխու վար հակում մը,
հաստատական, և «ոչ»ը, գլխու յետա-
դարձ շարժում, ժխտական:

Միամիտ սերունդ. որ հատնիլ կ'սկսի
տակաւ, նոյն իսկ դաւառներու մէջ ալ, և
որ տակայն ցուակցութեան մորմոքը՝ կը
թողու իր ետեւ, զի հնութեան և խան-
դաղատանքի հով մը կար իր մէջը:

Այս էր երգչուհւոյն մայրը:

Մուած, ծերացած կին, «Հաճիանան»:
Եւ երբ շատ անգամ՝ մենք պզտիկ աղայ՝
իր կոյր աղջկան մօտ կ'երթայինք՝ կը
տեսնէինք զինքը ամեն անգամ, միշտ
նոյնը, դադողացող, ինչ որ տեսած էինք

անկէ առաջ ալ, կարծես ձիւնով շինուած
մարմին որ հպման մը կ'սպասէ քայքայ-
ուելու համար, նոյն թիթեղի ծեքծեքուն
ձայնն իր դողացող շրթունքներուն վրայ
և նոյն ծերութեան տարիքի լեցուն տիկն
իր շալակը, երկիւղալի այն պատին պէս
որ գիտես թէ պիտի փչի ու չի փչիր:

Օր մըն ալ գերեզմանոցը կը փորէին.
աղքատիկ կ'երեւէր դադաղը. մէկ երկու
ծերուկներ յուղարկաւոր եկան. դադաղն
«Հաճիանային» է եղեր:

Աղջիկը օտարներու տուն, օտարներու
ձեռք մնաց: Իսկ եղբայրը Պոլսոյ ո'ր մէկ
խանին անկիւնը կամ «զարիպներու» ո'ր
մէկ շարքին մէջ, մարդ չգիտցաւ, ո'չ ալ
քոյրը:

Բ.

Ասկէ քանի մը տարի առաջ երբ տե-
ղական սովորութիւններն ալ նախնի տա-
րադներու պէս վերցած չէին դեռ և «սալ-
դա»ն՝ վերարկուն և «չալվար»ն ալ բան-
թալօնին տեղի չէին տուած՝ մեր քաղքին
մէջ ալ ամեն սեղանի շուրջ, ամեն խրախ-
ճանութեան ու զուարթ գէմքերու շարքին
մէջ կ'երեւէր դոյզ մը կոյր աչքեր, գու-
նագեղ փունջի մը մէջ սպրդող տփգոյն,
խորշով տերեւի մը ազդեցութիւնը ընելով:
Տեսցոյց ու հիւրերուն գետինը բոլորող
օղակներուն մէջ իր յատուկ տեղը պահ-
ուած էր. ամենքը կը սիրէին իր անոյշ
ձայնը. աչքին զլացուած լոյսը ներդաշ-
նակութեան փոխուած էր, անոր ցաւէն
կծկուած պուկունքներուն մէջ:

Երգել կուտային անոր ու մտիկ կ'ը-
նէին. իր ցաւագին շեշտը, որ արեւելքի
թաղծալից բանաստեղծութեանց կը պատ-
շաճէր, ամենուն սիրելի էր:

Այսպէս մասնակից կ'ըլլար ամեն հան-
դեսի. ուր որ ուրախութիւն կար, երգչու-
հին կը փնտռուէր հոն, իր ողբակոծ հա-
ռաչանքը՝ այս ցնծութեան ու խնդումի
գումարումներուն մէջ անհրաժեշտ հակա-
պատկերի պէս բան մըն էր: Ու երբ օղիի
բաժակները պարպուէին ու արբեցու-
թիւնը սկսէր, այս դոյզ մը կոյր աչքերը
կ'ողեւորէին կարծես. իր կիսաբաց շըր-
թունքներէն կ'ելլէր կը բարձրանար ձայ-
նը, կը խրոխտար, կը պաղատէր կամ կը
ղայրանար:

Աղջիկը կ'երգէր ու իր նուագներուն մէջ պղտիկ սենեակին մէջ հաւաքուած բազմութիւնը կը շոգեանար, կը ցնդէր կարծես, ափիտնի գալարուն մութերու մէջ կորսուած, խելայել ու դանդաղիտ:

Յանկարծ մութ անկիւնէ մը նոր երգի մը անուն կուտային ու կոյրը՝ հնազանդ կը համակերպէր. իր փոստաբոյր եղանակներուն ունկնդրողները կը մոռնային ինքզինքնին ու ինքը դիւցազնուհին կը մնար միակ, իշխելով ամենուն վրայ, խելքը գլուխը ու դիտելով իր շուրջի երազամոլ բազմութիւնը. եթէ իր մութ աչքերը՝ մութ սենեակն ըլլար լուսանկարչի մը, ինչէ՞ր չպիտի պատկերանային հան: Հիմայ ամեն պայմանադրական կեղծիք վերցած է ալ ամենուն վրայ ու բարքերնին երեւան կուգան յայտնի, մերկ, ուղորմ մերկութեամբ: Այդ մութ աչքերուն մէջ «ալպօմ» մը պիտի ձեւանար, այլապէս ու ալյանդակ հաւաքածոյ ամեն խառնուածքներու:

Ինքը սակայն հասարակաց գործիք մըն է միայն ու պէտք է յարմարի ամենուն ալ. խնդայ կամ արտասուէ, պահանջողին համեմատ. թեթեւ նաւակ զոր ամեն մարդ իր ուզած կողմը կը քէ. յատուկ կամք մը կամ անհատականութիւն մը ունենալու չէ. բայց տարիներէ հետէ՝ այնչափ այլորակ բնաւորութեանց՝ դարբնոցներէն անցած՝ իր հոգւոյն մետաղը մաքուր է. այս փոքրիկ նաւակը կը սպրդի ամենուն ձեռքէն, առանց երբէք որոշ տեղ մը կանգ առնելու:

Գ.

Օղիին ազդեցութեան տակ՝ հանդիսականներուն աչքերը իրենց կոպիւններէն դուրս կ'իյնան, վայրագ ցանցերով կը շառագնին և սրտի ծալքերն ալ կը պարզուին ծծուն թուղթի մը պէտուր գաղափարները, մեղանի կաթիլի մը հանգոյն, կ'իյնան, կը ծաւալին: Ֆէսերը կամաց կամաց պատշաճի դիրքէն հեռու յօնքերու վրայ կ'իջնան և «եաղմայներն ալ կ'իստո մը քակուած», ծոծրակներէ դար վար՝ գինով օձերու երկույթը կ'առնեն ու դեռ աղջիկը կ'երգէ, անզգայի մը պէս, ամենուն փափագին հնազանդելով իբր թէ դրան մը կոճա-

կէն կախուած անտրտունջ վարագոյր մը ըլլար սր ամենուն երեսին ու քղանցքներուն կը քսուի, միշտ իր կոչմանը հընազանդ: Կ'երգէ «եաղմայի հովարտային» սիրած «չըգրէն» մինչեւ հինուկ «աղային» լիկա՞ծ մէկ «չարգին». բոլոր հըրապարակ ելած և հասարակութեան շոյինքոտ թուքով փոստած «խաղերը» այդ կոյր աղջկան մոքին մէջ միշտ կեանք ունին: Տարիներ կ'անցնին, ինք կը ծերանայ, բայց հասարակաց երգերը չեն հինար իր սրտին մէջ. չի մուրար երբէք. ընկերութեան վարի աստիճաններուն վրայ թէեւ՝ այլ յանձն չառնուր բնաւ սողալ վեր ելլելու համար: Կ'երգէ և երգովը կ'ապրի, ինքզինքը պատառու թըռչունի մը պէս: Աւերակ այդ մարմնոյն մէջ ամուր հոգի մը կայ, մուրացիկներու պէս կնճռոտ ցաւեր կամ ժամադրեալ տառապանքներ. չի յայտներ ալքատներու յատուկ միօրինակ յանկերգով. եկեղեցւոյ դռներուն առջեւ չէ երեւցած օր մը ժամուորին ոտքերուն փակչելու անհոգի մաղթանքներով որոնք ոտքերու տակ կը ամբին յաւէտ. իր վերքը ցոյց չի տար, այլ կը յուզէ և ահա ինչո՞ւ իրաւունք ունի մուրալէ առաջ պահանջելու:

Գ.

Օրրանէն աչքերը կորսնցուցած, կոյր նայած է աշխարհին, և մարդիկ ալ փոխադարձաբար կեղծիքի շիւ աչքերով նայած են իրեն: Չէ տեսած բնաւ ամբողջ կեանքին մէջ, և ինչ որ ամենէն աւելի այդ աւերակ կեանքը կ'ազդէ սրտի՝ աշխարհի փութկոտ իրարանցման մէջ՝ անգիտակ վայելում մ'ալ իրեն սեպհակառնելու երեւոյթը կը թուի. ինք ալ առօրեայ կեանք մ'ունի ուրիշներու պէս, ինք ալ կը քնանայ ամեն օր ու կ'արթննայ յոսով՝ առանց սակայն տեսնելու, բայց չեմ գիտեր թէ ի՞նչ բան արդեօք իր քրնաչըջիկի աչքերուն դէմ կը կանգնի՝ յաւիտենապէս խաւար ամեն անգամ երբ խորհի թէ ինչո՞ւ կ'ապրի ինք, ծնաւ ու կը հալի աննպատակ, առանց հասկացողութեան. քաղց ամենուն ճամբէն առանց երբէք հարցուցած ըլլալու. կոխեց ուր կոխեցին ուրիշներ. այլ մայրն ալ՝ կեանքին պէս՝ ծնեկէն վերջ չի հասկցաւ կարծեմ թէ ինչո՞ւ ծնաւ այդ հէ՛գ աղջիկը:

Պարբերգ ՌՈՒԲԻՆ ԶԱՐԴԱՐԱՆ

ԻՍ ՂԱՐԻՊ ԵՂԲԱՅՐՆԵՐՍ

Վանայ Մաշկակտակ գիւղացի Զատօն դեռ տասն և հինգ օր է որ եկած է ի Պօլիս. իւր հօրեղբայր Յարօյին մօտ կը բնակի:

Օր մը Յարօն իւր եղբորորդոյն հետ Եէնի գաբու երթալու համար երբ Լանկայէն կ'անցնէր, Զատօն տեսնելով Յուսայ Ս. Թորոս եկեղեցւոյն փայտակերտ զանգակատունը, կ'ըսէ հօրեղբօրը թէ ահա եկեղեցին հասած են:

Հօրեղբայրը. — Էդա մեր ժամը չի. Ռումնեօրաց ժամն ի:

— Ա՛, վահ, Ռումնեօրաց ժամն ինչ ի. երթանք հայինք անգամ մը:

Ու կը մանեն ներս:

Օտար տաճարի մը մէջ, երբ մեր Զատօն պատէն կախուած կը տեսնէ ճիւղ իւր գիւղի Աստուածորդւոյն Խաչելութեան պատկերը, բռնաց մը կ'իջեցնէ իւր գըլխուն, և, աչքերը բարկութեան հոսքէն խողտած, — Հայ մեռնեմ քէ Քրիստոս, եկեր ես Սթանպօլ, լուս հաւատքդ կերեր, եղեր ես Ռօմ. — կը պոռայ պատկերն ի վեր, և դուրս ելել կ'աճապարէ՝ ուխտադրելով թէ ինք, իւր պանդխտութեան մէջ, նոյն իսկ Քրիստոսէն աւելի անխախտ պիտի կենայ. . . Քրիստոսի հաւատքին վրայ:

* *

Մեր գաւառացի ընթերցողք գուցէ առարկեն մեղ թէ Վանցի մը չըսեր երբէք «եղեր ես». գիտեմ «եղեր ես» ըսելին. գիտեմ թէ Վանցիք, ի բնէ գրաբարագէտներ ըլլալուն համար թերեւս, խիստ յաճախ «ը» կը հնչեն մեր «դ» արտասանածը. բայց հասկնալի ըլլալու տենչը կը բռնադատէ զմեզ մեծամասնութեան շաւղին հետեւիլ. ապա թէ ոչ այս տողերը գրողը կրնայ վանեցւոց լեզուն խօսիլ՝ սօլերը ոտքին «վալիկ»ի մը չափ:

Սօլեր, լաւ. կենանք վայրկեան մը այդ «սօլեր»ին վրայ, որ կը նշանակէ կոչիկ, ոտնաման:

Հայր Այտընեան, իւր հսկայ քերակա-

նութեան պատմական մասին մէջ, կ'ըսէ թէ մէկգլխէ առնուած են մեր «սօլեր»ը և ֆրանսերէն *soulier*ն:

Թէեւ այս կարծիքը լսող Վանցի մը ա'լ քիթ մուրթով պիտի փոխարինէ մեր բարեւը, իմացած ըլլալով թէ ինք, անգիտակցաբար, գաղղիերէն կը խօսի եղեր, թէեւ Պօլսեցւոց համար ստուգիւ ֆրանսերէն է նորեկ Վանցիի մը լեզուն, բայց և այնպէս մեղք մը չպիտի համարուի անշուշտ երբ ըսեմ թէ այդ «սօլեր»ը յոգնակի է. տեսէք ատոր եղանակին ինչպէս կերգեն Վանցիք:

Էհա՛նք Սթամպօլ

Առնէ՛նք չուխտըմ սօլ

Հագնենք... եւլն.

Եթէ Հ. Այտընեանի խօսքին նայելով մարթ է ըսել «մէկ սօլերս հագայ, սա միւսն ալ բեր», այս պարագային մէջ, Վանցիք թող շառագունին որ ֆրանսերէն խօսիլը բաւական չի համարելով, մինչեւ անգամ ելեր այդ լեզուն կ'աղաւաղեն՝ արդէն եղակի բառ մը վերստին եղակի շինելով, բաւոյ ու բրդունի մը, կամ «եւրըմ բապուճ»ի մը վերածելով *soulier*ն:

* * *

Քանի որ մեր յօդուածը վանցիներով, սօլերներով սկսանք, պիտի ջանանք շաւղունակել այդ ընթացքին մէջ:

Թէ ինչո՞ւ Վանցիք տիմարի մը կ'ըսեն «Շատխու ծուռ»: Աւանդութեամբ գիտենք թէ մեր պապկէ պապիկներու ատենը, Վանայ Շատախ քաղաքին մէջ գիւղ մը կար, որոյ ամբողջ բնակիչք «ծուռ» այսինքն պակաս էին:

Այս հանրային շուրջութեան իբրեւ պատճառ. ցոյց կը տրուի տեղւոյն միակ աղբիւրը, որոյ ջրոյն մէջ բաղադրութիւն մը կայ եղեր. նոյն ջուրէն հեղ մը խմողը ա'լ սովորականէն տարբեր բան մը կ'ըլլայ եղեր:

Այժմ մտքերնուդ առջև բերէք այդ գիւղէն չորս Հայեր որք Շատախ կ'երթան իրենց համար հագուստ և սօլեր գնելու. դիպուածն իրենց դէմ կը հանէ չորս ձեռք համանման զգեստներ ու չորս զոյգ կապարմիր սօլեր. եթէ մեր գիւղացիք պարզ մահկանացուներ ըլլային, պիտի ըսէինք

թէ դիպուածին այդ կատակին վրայ ուրախութենէն... խենթեցան. բայց որովհետեւ մեր գնորդներուն մտաւորական վիճակը արդէն ծանօթ է մեզ, չպիտի կրնանք ըսել այդ խօսքը. այլ միայն թէ գնեցին լաթերն ու սօլերը, հագան և շտապեցին իրենց գիւղը դառնալու:

Իրենց գիւղին մօտ գետ մը կայ որուն վրայ կամուրջ մը. յոգնաբեկ կը հասնին մեր գիւղացիք կամուրջին վրայ, կ'ուզեն քիչ մը հանգչիլ ու կը նստին կամուրջին եզրը՝ ոտքերնին կախելով գետն ի վար:

Կէս ժամու դադարէ մը յետոյ, կը փափաքին շարունակել իրենց ճամբան. բայց անատախկ ահօնէի դժուարութիւն մը. ինչպէս որոշել իրենց անձը որ յար և նման լաթերու մէջ պարփակուած է. մանաւանդ ինչպէս ջուկել ոտքերնին որոց ամենքն ալ կախուած ու անշարժ կը կենան կարմրաբլտ. չեն ուզեր իրարու դէմ անիրաւութիւն ընել՝ մէկըմէկու ոտքերը գործածելով իրենց գնացքին. կ'ըսպանեն ակնդէտ. բարեբաղդաբար հոնկէց կ'անցնի ուրիշ գեղէ մարդ մը, որ, իրեն առաջարկուած այս դժուարակնճիւ հարցին առջև, խնդրել լըծօրէն իմաստասիրելով և երկու ոչխար նուիրելու խոստումէն հրապուրուելով, կը վերցնէ ձեռքի «բիրը», չախ՝ կ'իջեցնէ մէկուն ծունկերուն. այն որ «եաման Աստուած» կը պոռայ, տէրն է գանահար սրունգին, որ ծեծին տակ թէև ձմրուած, բայց իրենց սեփական տէրը գտած ըլլալով գոնէ աղատ են զոյգ զոյգ բաժնուիլ խառնուրդէն ու երթալ ի գիւղ:

Գիւղացիք իրենց «խօտ էշթա րաղիպըն»ներով, այսինքն անունն շնորհակալութիւններով և երկու ոչխարներու նուիրատուութեամբ կը վարձատրեն մարդը, որ կ'զգուշանայ գեղին ջուրէն խմելու:

Գուցէ օր մը պէտք ունենանք աւանդութիւններու. հետեւեալքս ես ի գիր պիտի առնեմ այն ամեն բաներն զորս կը քաղեմ մեր գաւառացի եղբարց հետ խօսակցելով: Ընենք ուրեմն թէ այդ միամիտ գիւղացիք աստեղով կը կառավարուին եղեր տարբեր գիւղէ բերուած գգիրով մը, աղատ ամեն տեսակ տուրքէ:

Նորահաստատ հարկահաւար մը կը ներկայանայ գգիրին և կը պահանջէ գին տուրքը. տուրք. գգիրը կը խորհի թէ լաւագոյն միջոցն է իր պլոտիկ հօտը ճանչցնել այս մարդուն. բայց մարդն ալ խաբուողներէն չէ. հնարագիւտ գաղափար մը կը ծնի մտքին մէջ. գիւղացիք կը հաւաքուին. հարկահաւարը գիւղացւոց առջև կը թափէ մէկ օխայի չափ սև չամիչ որոյ մէջ դրած էր քսան երեսուն հատ այն սև միջատներէն որք քարերու տակ, խոնաւ տեղեր կը գտնուին:

Գիւղացիք կ'սկսին ուտել չամիչները, բայց, ի մեծ զարմացումն իրենց, կը տեսնեն թէ չամիչներէ «ոմանք» կը քալին կ'երթան ու ինքզինքնին աղատել կը փութան գիւղացւոց անյադ կոկորդէն:

Մէջերնուն այն որ հաւանականաբար կախարդեալ աղբիւրին քովն իսկ կը բընակէր, կ'ըսէ իւր սեղանակիցներուն — «Տղաքներ, ոտքով չամիչները ուտենք ամենէն առաջ, մէկալները մերն են արդէն»: Ու կը լրիտեն միջատները:

Երևակայել գգիրին դէմքը:

* * *

Արցունքի շիթ մը սակայն:

Տունս նստած կը գրեմ այս տողերը բարեկենդանի կիրակին. պատուհանէն կը տեսնեմ որ երկաթուղոյ գծին քովէն կ'անցնին կ'երթան խումբ մը դիմակաւորք, որոց առաջնորդ ախրոտ խեղկատակը, խոշոր աւելը ուսին զարկած կը ցատկէ ու կը ցատկէ: Այդ խումբին գրեթէ քսան քայլ ետեւէն կուգան ճշմարիտ յուզարկաւորներ. խոնր մեռնող պանդուխտ Հայ մըն է զոր իւր քաղաքացիները կը տանին հողել: Վա՛հ թէ այդ անուշիկ եղբայրս, դուցէ երիտասարդ մը, գուցէ ամուսնացած՝ զաւակներու տիրացած կտրիճ մըն էր. գուցէ միտք ունէր այս տարի դառնալ երկիրը, մտնել իւր հայրենի տաքուկ տունը, թող ըլլայ սառնադատ երգիքը. ինք իւր հրաշունչ համբոյրներով պիտի տաքցնէր իւր տան սեմը, պիտի տոչորէր իւր կողին և սրտին կցորդները:

Վա՛հ իմ զարկալ եղբայրներս:

ՈՍՏԱՆԻԿ

ՇԱԲԹՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

Ա Ջ Գ Ա Յ Ի Ն

Ս. Էջմիածնայ վանական վարչութիւնը լուծուեր է: այս պատճառով մեծ անհամաձայնութիւններ տեղի ունեցեր են Սինդիկատի մէջ:

—Այվազովսքի պատկեր մը ընծայեր է Ուսմբերի (Միացեալ-Նահանգք) Հայոց եկեղեցիին: Պատկերը կը ներկայացնէ աւելի ծագում մը: Եկեղեցիին վարչութիւնը պիտի ծախէ եղբւր պատկերը, եթէ լաւ գին մը գտնէ, այսինքն գոնէ 200 տոլար:

—Միացեալ-Նահանգներու կառավարութիւնը հրաման հաներ է որ ասկից ետքը հայ կամ ասորի չկրնան ցամաք ելնել, եթէ տարի մը ապրելու չափ դրամ չունենան:

—Ս. Էջմիածնի ժառանգաւորաց դըպրոցի նախկին աշակերտներէն Պ. Մ. Էկմարեան, որ քանի մը տարի առաջ փախուց յաջողութեամբ աւարտած էր՝ Փեթերսպուրկի երաժշտանոցը՝ մեծանուն Ռուպինշիմայի աշակերտելով, մեր պատարագի արարողութեան երգերը վերածեր է եւրոպական երաժշտութեան:

—Երկուշաբթի Գր. Բ. Իսկէն Պարիսի քաղաքի յանձնարարութեամբ Վանի առաջնորդական տեղապահ Տ. Սահակ Գարսիս պետի պաշտօնը վաւերացնող հրամանագիրը, որ հաղորդուած է Տ. Սահակ Գարսիսին ի վան:

—Այրի տիկին Պարոնեանի միժակը ծանրացեր է: Սա միխթարութիւնը կայ որ հանձարեղ երգիծաբանին կինը զրկանքով չպիտի մեռնի և աչքն ետին չպիտի մնայ:

—Ֆիրտէվսի՝ հռչակաւոր Պարսիկ բանաստեղծին ՇԱՀՆԱՄԷԷՆ «Ռոստամ և Սոհրաբ» ամբողջ վէպն և զանազան հատուածներ թարգմանուեցան Թիֆլիսի մէջ Պ. Սամուէլ Գիւլշտեանցի կողմէ:

Ն Ե Ր Ք Ի Ն

Ապահովագրական օսմ. նորակազմը ընկերութեան բաժնեթուղթերուն ստորագրումը տեղի ունեցաւ նախընթաց հինգշաբթի օրը, Պանք Օթօմանի մէջ: Ստորագրելի գումարն էր 440000 ոսկի, որ կ'ըսուի թէ եռապատիկ ստորագրուած է: Այս գումար բաժնուած է 40 հազար բաժնե-

թուղթերու, իւրաքանչիւրը 11 օսմ. ոսկի կամ 10 անգլ ոսկիի և կամ 250 ական ֆրանքի: Ապահովագրական այս նորակազմ ընկերութիւն, որուն գլխաւոր հիմնադիրն է Պանք Օթօման, իր գործառնութիւնները պիտի տարածէ մասնաւորապէս գաւառներու մէջ, ուր մասնաձիւղեր ունի պանքան:

—Այն երկրագործք որք կ'ուզեն իրենց այգիներուն մէջ ամբերկեան որթատունկ հասցնել, և կամ նորէն այգիներ հաստատել, պարտին մինչեւ փետրուարի վերջը ներկայացնել իրենց աղերսագիրները, ըստ պաշտօնական ծանուցման Հանրագումար շինութեանց նախարարութեան:

—Վերջերս Լոնտոնի մէջ վախճանող Պ. Սթամբի Նէկրոնոյէ յոյն վաճառականը 2000 անգլ. ոսկի կտակեր է Սագրէի Յունաց բարեգործական հաստատութիւններուն: Ականջը խօսի Աճէմօղլուին:

Ա Ր Տ Ա Ք Ի Ն

Անցեալ ուրբաթ օրը, Ֆրանսայի նախկին վարչապետ Պ. Ժիւլ Ֆէռի, նախագահ ընտրեցաւ Երակոյտի, 148 քուէով, 249 քուէարկուներու մասնակցութեամբ:

Այս ընտրութիւն Ֆրանսայի մէջ կը նկատուի ժամանակիս կարեւորագոյն դէպքը:

—Բանամայի ընկերութեան հաշուեյարգար Պ. Մոնչիքուռի պատուիրակն և Գոլոմպեան կառավարութիւնը համաձայններ են որ մինչեւ մարտ 5 երկարաձգուի Բանամայի ջրանցքին շինութեան վերաբերեալ պայմանագրութիւնն որ փետրուարի վերջը լրացած է:

—Անգլիոյ մէջ արշաւանք մը կը պատրաստուի դէպի հիւսիսային բեւեռ, Պ. Ֆրէտէրիք Ճէքսընի առաջնորդութեամբ, որ տասն հոգի պիտի առնէ իր հետը:

—Իտալիոյ թագաւորին եղբորորդի Ա. օսգի գուքսը, որ Լոնտոն կը գտնուի այժմ, ի մօտոյ պիտի այցէ Վիքթորիա թագուհիին և պիտի հրաւիրէ զայն որ դարնան Ֆիօրէնցա երթալուն առթիւ Հռոմ ալ այցելէ: Թագուհին Ֆիօրէնցա պիտի երթայ մարտ 20ին: Իրեն պիտի ընկերանան Պաթեմպէրկի-իլխանն ու իլխանուհին (թագուհիին աղջիկը):

ԱՐՏՈՆԱՏԷՐ

Ա. Ս ԻՐԹՈՒՆՅԱՆ

Ի Տպարանի ԱՐԹԵՆԷՔ ԵՆ ՄԱՍԻՍ լրագրաց